

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի կողմից 2013թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կատարած աշխատանքների մասին

Ներկայացված է 17.01.2014թ. համայնքի ժողովում:

/Զեկ. համայնքի ղեկավար Ս.Պետրոսյան/

Հարգելի տանձուտցիներ և հյուրեր թույլ տվեք Ձեզ ներկայացնելու Տանձուտի գյուղապետարանի և ավագանու կողմից 2013թ-ի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կատարած աշխատանքները:

Ընթացիկ ժամանակաշրջանում անցկացրել ենք 12 ավագանու նիստ՝ կայացրել է 54 որոշումներ: Պատասխանել ենք ստացվող բոլոր 139 գրություններին և 104 դիմումներին, համայնքի ղեկավարի կողմից հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել է 78 որոշում և արձակվել է 26 կարգադրություն:

Համայնքում սիստեմատիկ կատարվել է աղբաթափում:

Գյուղապետարանում ստեղծվել է հանձնաժողով կատարվել է անասունների և համայնքի տարածքում գտնվող հողերի և ցանքերի հաշվառում: Հանձնաժողովի կողմից կատարվել է մայիսի 12-ի կարկտահարությունից վնասված 150,17 հա հողատարածքների հաշվառման աշխատանքներ:

Մեծ հաղթանակի 66-րդ տարելիցի նախօրյակին խնամվել է գյուղի կենտրոնում գտնվող հուշարձան կոթողը և կազմակերպվել է միջոցառում, տրվել է դրամական օգնություն պատերազմի վետերանին և արցախի ազատամարտիկներին: Դրամական օգնություն է տրվել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին:

Գյուղապետարանը ավագանու անդամների հետ կազմակերպված ձևով անցկացրել է զարնանային և աշնանային զորահավաքները: Զինակոչիկների և նրանց ծնողների հետ անցկացրել ենք ռազմահայրենասիրական թեմայով զրույցներ, որի արդյունքում ոչ մի զինակոչիկ չի խուսափել զինվորական ծառայությունից:

Մայիսի 9-ի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում և նվերներ ենք հանձնել պատերազմի վետերանին և արցախի ազատամարտիկներին:

Տուժած թվով 92 հողօգտագործողներին անհատույց հատկացվել է սերմեր /ծմերուկ 10կգ., լուլիկ 4կգ., եգիպտացորեն 100 կգ., առվույտ 200 կգ., արևածաղիկ 25 կգ., դդում 1 կգ., վարունգ 35 կգ./, թվով 300 ընտանիքներին 3000 լիտր դիզվառելիք և 326 հողօգտագործողներին զիճվել է 2600000 դրամ հողի հարկեր:

Գյուղում գործում է 19-րդ դարի եկեղեցի, որը օգնում է համայնքի բնակչության հոգևոր դաստիարակությանը :

Ընթացիկ տարում կատարվել է համայնքի կոյուղու ցանցի մաքրման աշխատանքներ :

Սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձման աշխատանքները:

Ավագապատվել է գյուղամիջյան ճանապարհները:

Կատարվել է խմելու ջրի ջրագծերի վթարների վերացման աշխատանքներ :

Հողի հարկի տարեկան պլանը նախատեսված է 6900.0 հազ.դրամ փաստացի կատարվել է 7387.4 հազ.դ. , 107 % -ով:

Վարձակալական հողերի վարձավճարների տարեկան պլանը 2002.0 հազ.դրամ. , փաստացի կատարվել է 1656.6 հազ.դ. , 82.7 % -ով:

Գույքահարկի գծով տարեկան պլան է նախատեսվել 2265.2 հազ.դր., փաստացի կատարվել է 2833.1 հազ.դրամ, 125 % -ով:

Խմելու ջրի վարձերի տարեկան պլանը 2000.0 հազ.դր. դրամ փաստացի կատարվել է 428.1 հազ. դր. 21.4 % -ով:

Տեղական տուրք է նախատեսվել 400.0 հազ.դրամ փաստացի 374.1 հազ.դր. 93.5% -ով:

Պետությունից ստացված դոտացիան կատարվել է 100%-ով 21452.0 հազ.դրամ:

Սուվենցիա 794.1 հազ.դրամ 100%

Գյուղապետարանը մասնակցել է դպրոցի վերջին զանգի միջոցառմանը, շրջանավարտներին տրվել է դրամական օգնություն:

Հունիսի 1-ից համայնքում գործում է մանկապարտեզ, որտեղ հաճախում են 48 երեխա :

Վերանորոգվեց մանկապարտեզի խմելու ջրի խողովակը :

Համայնքի միջոցներով մասնակի վերանորոգվել է մշակույթի տունը փոխվել են պատուհանները և դուռը:

Աշխատավարձի պարտք չունենք:

Ամանորի կապակցությամբ կազմակերպվեց միջոցառում և համայնք 2-6 տարեկեկան երեխաներին և դպրոցի 1-5-րդ դասարանների աշակերտներին հանձնվեց ամանորյա նվերներ :


Համայնքն ունի բազմաթիվ չլուծված խնդիրներ:  
Հետագա ծրագրերում նախատեսված է ակունքի և մանկապարտեզի վերանորոգում:

Գյուղապետարանի կողմից արվում է ամեն ինչ աշխատանքները կազմակերպված և արդյունավետ անցկացնելու համար:

Համայնքի ղեկավարը բարձրացրեց հետևյալ հիմնախնդիրները

1. Մանկապարտեզի շենքի վերանորոգում
2. Մշակույթի տան վերանորոգում
3. Համայնքի կոյուղու վերանորոգում
4. Գյուղապետարանի շենքի վերանորոգում
5. Հուշարձանի վերանորոգում
6. Նոր ջրագծի կառուցում
7. Գրադարանի շենքի վերանորոգում

Տանձուտ համայնքի ղեկավար



Ս.Պետրոսյան